

մեր ալ ունիմք, ամոնց իրազորեմամ համար կրնամք Միխիթարի կեանքէն, ամոր գործէն, Միխիթարի ոգիէն, ամոր դամբանէն սքանալ ամհրաժեշտ կորով մերմտում, ինչպէս ձուկուղիի այնքան յաջող կերպով հայացուած տողերը կ'ըսենք.

«Քաջազներու շիրիմներն,

Արի ոգին կը վառեն մեծ գործերու,

Եւ դանդախին սրբանշուր և լծնադ

Կ'ընծայեն վայրը որ գերենք կ'ընդունին»:

Եւ արդարեւ Միխիթար եղաւ քաջագն, ապրիցաւ արիաբար իր ամբողջ պայքարի կեանքը, գործեց համեմարօրէն, և զմաց նրամուծեան ծոցը յաւերժութիւնը վայելելու համար. և մենք կարող ենք իր ամման յիշատակին ուղղել այն միննոյն իստ.

քիւր՝ որ քաջամայապետը կ'ուղղէր Յուզիթի, երբ սա յաղթանակէ կը վերադառնար.

«Գուռ բարձրութիւն Երուսաղէմի, Գուռ ցնծութիւն Խորայի, գուռ պարճանք ազգիս մերոյ, զի արարեր զայն ամենայն բարութիւնս ձեռք թոյլ և օրհնեալ եւ զիջէր յԱմենակալն Աստուծոյ մինչև յաւիտեան»:

Կորովալից ծափելով պատկուեցաւ Մուրատ Խափայեանն ազնիւ սաներու այս ճառանդուն արտայայտութիւնը, որ անշուշտ ամենուն վրայ սա տպաւորութիւնը թողուց, թէ Միխիթարասէր այսպիսի Հայկական անտարակոյս բերկրառիթ զաւակներ պիտի բլան մեր Ազգին:

Հ. Ղ. ՏԱՅԵՆ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԽԻԹԱՐԵԱՆՆ ԿԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տնո բազմ. 1925, էջ 125)

ՃԺԵ.

Բենեդիկտոս ԺԴ. մեծ հանդիսաւորութեամբ կը շնորհէ Պատրիարքական Պալատում մեր Արհամամ Պետրոս Ա. Պատրիարքին՝ իր Առաքելական պալատին մէջ՝ Աստուածածնայ Անարատ Յղութեան տօնին:

Մեր նամակագիրը ոչ միայն կու տայ մանրամասն նկարագիրը սոյն հանդիսին, այլ նաև յոյժ կը շահագրգռէ Սրբազան Հօր կողմանէ եղած ընծաներովն ու պատուարեր արտօնութեամբ մը, որոնք ստուգիւ նշաններ են Անոր հայրական բացառիկ սիրոյն, ինչպէս այնքան որոշակի կ'արտայայտուի նամակիս մէջ, մանաւանդ հոն նշանակուած ինչ ինչ աննպաստ պարագաներու միջոց:

Գիշարագիւյի և գիրապատուելի տէրութեան ձերում յոյժ սիրով և յարգութեամբ ողջոյն մատուցանեմ՝

. . . Նաեւ հետեւելով առ ի ծանուցանել գերյարգելութեան ձերում գերապայծառ պետրոս պատրիարքին կողմանէ յայտ առնեմ, որ որպէս միուս գրովս ծանուցիի աստուած(ածնայ) մարգար յղացման օրն ընկալաւ փափէն զպատրիարքական փալատն, միայն թէ ոչ ի Սանթա Մարիայ մանօռ, այլ փափի պալատն հանդիսաւորապէս առաջի բազմաց կարտինալաց, ետ որոյ փափն ընծայեց սմայ մին պատուական զուարթ(ի)թ խաչ, մին մատանի և մին պատուական սուղառ, և ընդ իւր տարեալ էր ազալայ պետրոսն որ առաջի անգամ համբուրեց զօտն փափին. յոյժ սիրով ընկալաւ զնոսաւ Եւս յայտ լիցի որ փափն հրամայեալ էր թէ փոփականտա որչափ հայտ կամ արգիւ լեզուա գրեանք

կան, լաւ կազմով կազմեն, որ և արարեալ և պատրաստեալ էին. և երբ պատրիարքն զնաց փափին շնորհակալութիւնս մատուցանել վասն փալիօին, նոյն պատրաստեալ զբերն և հրամանաց յղեցեալ աստուածաշունչներուն մէկն հո պատրիարքին, յաժմա աւարտեցան արարողութիւնքն, բայց սոյն պատրիարքս կայ տկարութեամբ ի օտիք և փորու խոստուկի կողմանէ:

Այն որ նշմարեցի միուս զրոպս թէ մօնսինեօր պօնան ժողովքին և քարտինալ փէթրային գրեր է, զանազան պատճառաւ անհաւանութիւն տալով վասն սորայ պատրիարքութեան և տեղս հաստատման կողմանէ, որ և առաջ քան զփալիօն տան փափին ծաւնոցին, և փափին բարկացեալ ոտնակոխ արար զգիրն նորին ասելով, [էթէ] որ հկեսցէ առ սուրբ աթոռն պարտ է ընդունել զնա, ևս առաւել եկեղեցեայ աշխատաւոր հաւատարկո՞մ որդիքն. բայց կարծեմ սոյն բանս զառնայ ի ֆուս նոյն մօնսինեօր պօնային . . . ազալչա պնտրոսին հետն պատկերներն և տնօրինման գիրն կու ուղարկեմ: Սոյն պատրիարքն իմացաւ այս տնօրինման կողմանէ. ասաց ինձ. թող մնայ այդ, մի ականք, երբ ևս տեղն զնամ ունիմ իշխանութիւն տնօրինելոյ և օրհնելոյ: Բայց ես ըստ հրամանի ձերում արանց ըսպասելոյ նորա զալուստեան յղելոց եմ զտնօրինումն, քանզի թէպէտ իւրեան չասի, լինի թէ ունի գիշխանութիւնս այս, բայց կարծեմ ոչ ի յարեմանս այլ ի յարեմալ:

Սոյն Պատրիարքս ունի իշխանութիւն ԺԲ քաւալիէր անելու. կամի և ասաց ազալչա պետրոսին. Բեզ քաւալիէր կանեմ. և սա կերեի որ փափագ և կաճ ունի լինելոյ սինեօր քաւալիէր . . .

Ամի տեառն 1742

Դէկտեմբերի 22

[ի Հոռով]

Խոնարհագոյն ծառայ

[պատկերահան] Թահանէս

ԺԺԶ.

Մխիթարայ և անոր Ուխտին հանդէպ տաժաժ ամենամեծ համակրանքն ու յարգանքն է որ կը կարգանք Քահանայապետին առջեւ Աբբահամ կաթողիկոսէ արւստայտուած զգացումներուն և խօսքերուն մէջ:

Գերշադելի տէրութեան ձերում որդիական յարգութեամբ ողբոյ մատուցանեմ

. . . Վասն գերապայծառ Պատրիարքին կողմանէ յայտ լիցի հրամանացդ որ հաստատ գիտաւորութիւն ունի վէնէտիկ գալու ոչ այլ աղաքաւ այլ միայն հրամանքդ տեսնելու համար, փափին հարցան իւրն թէ որ ճանապարհաւ դառնալոց է ի յարեմալ և սա պատասխանեց. Թէպէտ դիտրին է ինձ ալիկունայու վերայով զնալ բայց հարկաւս տրապէս պիտի վէնէտիկ զնամ վասն Աբբա Մխիթարն տեսնելու աղաքաւ, և նա թէ ո՞վ է Աբբա Մխիթարն, սա կրկնեց թէ այն է որ երկու Աստուածաշունչ յղեց Սբբութեան ձերում: Ետ նորա հրամանացդ և կոսնի մեծ արդիւնքն ի վերայ յազգին հայաց կարծողն ծանոյց. այդ երկու Աստուածաշունչին մինն իւր ձեռքն փափն շնորհեց արալ, հանգերձ այլ զրգերով. իւր հետ եղեալ անմիջն են սոքայ. Սահակ հայկոպոսն, տէր Նիկիդայոսն և երկու աշխարհական ըսպասաւորք, մինն հալէպցի և միուսն էնկուքցի. թէպէտ ետոյ ի ժամանակին կու ծանուցանեմ եթէ սոքայ իւր հետն կուգան թէ սչ, քանզի տէր Նիկիդայոսն կամի բաժանվիլ վասն ազատաբար ապրելոյ . . .

Խոնարայ

Ամի տեառն 1743 յունվարի 12

[ի Հոռով]

[պատկերահան] Թահանէս

Շարունակելի

Հ. ՂԵՆՈՒՄ ՏԱՅԵԱՆ